



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«30» 07 2018թ.

No 06/3-3/43859-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ
Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 07.06.2018թ.
NՊ-39 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 388-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպության դրամարկղում (դրամարկղներում) պահվող արժեքների պահպանման, ինչպես նաև փոխադրման անվտանգության ապահովության պատասխանատվությունը կրում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, եթե կազմակերպության կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ այդ պատասխանատվությունը դրված չէ այլ անձի վրա: Գանձապահին իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը)

կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից: Գանձապահին արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխանցել ուրիշ անձանց՝ առանց կազմակերպության ղեկավարի հրամանի (որոշման): Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

Օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում, իսկ ապօրինի գործունեություն իրականացնողների մոտ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուից (այդ թվում՝ ապօրինի գործունեություն իրականացնողներից կամ սահմանված կարգով հաշվառված և արտոնագիր ստացած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից) յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար գանձվում է տուգանք՝ նույն մասով սահմանված չափերով:

ՀՀ կառավարության 28.09.2017թ. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստը արձանագրելու կարգը և արձանագրության ձևը հաստատելու մասին» N1214-Ն որոշման N հավելվածով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ տվյալ կարգի իմաստով, աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե փաստացի աշխատանք կատարող (փաստացի աշխատանք կատարած) անձանց մասով առկա չեն աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և գրավոր պայմանագիր:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ դրամարկղային գործառնությունները (այդ թվում՝ օրենսգրքի 53-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ գործունեությունը դադարեցնելու մասին հարկային մարմին հայտարարություն ներկայացնելու դեպքում) իրավասու է կատարել կազմակերպության գանձապահը, իսկ կազմակերպության աշխատակիցների թիվը երեքը չգերազանցելու դեպքում՝ կազմակերպության ղեկավարի հրամանի համաձայն՝ կազմակերպության ղեկավարը (տնօրենը), ապա բանկային և դրամարկղային գործառնությունները հիմնադրի կողմից կատարվելու դեպքում կիրառելի է օրենսգրքի 412-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը՝ անկախ օրենսգրքի 53-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական ծախսերի կատարումը գործունեության վերսկսում չհամարվելու հանգամանքից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 7/31/2018 17:50:11 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՎՄՍԸՎ հարկերի և պարտադիր վճարների
Մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. (060)544779